

ՀԱՄԱՍ ԱՐԵՒԵԼՑԻ

Կ + Կ Ո Ս Ա Ն Ե Ա Կ Յ

— Ք է զ զ —

Արտատպած


1896 թ. Ապրիլ ամիս Արարատ ամսագրից



ՎԵՐԱԲԵՐԴԻ

ՏՊԱՐԱԽ ՄՊԱՅ ԱԹ-ԱՌ-ԱՅ ԱՐԵՎԱՅ ԵԶՄԻԱՆԵՐԻ

1896



1999 ՐՊ

ՀԱՄԱՍ ԱՐԵՒԵԼՑԻ

Կ. ԿՈՇՏԱՆԵԱՆՑ




(Արտատպաժ 1896 թ. Ապրիլ ամիսի Արարատ ամսագրից)

— 883 —

ՎԱԴԱՐՃԱՊԱՏ

1896

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒԹ Ս. Է. ԶԵՐԻԱԺՆԻ.



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Զ. ՄԱՆԿՈՎՅԱՆ

ՀԱՄԱՄ ԱՐԵՒԵԼՑԻ.

ՀՐԱՄԱՆԱՀ
Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



425

h. 8 - 422

Հայոց հին հեղինակների մէջ կան այնպիւսիները, որոնք ծանօթ են մեզ միայն անունով: Նոցա գրուածքները տակաւին լցու տեսած չեն, որ կարելի լինէր անմիջապէս իմանալ նոցա գաղափարը, ոճը և այլ յատկութիւնները: Այդպիսիներից մէկն է Համամ Արևելցին: Նորա կեանքի և գործունէութեան մասին գրեթէ տեղեկութիւն չունինք: Պատմիչների և խօսքերից այսքան գիտենք, որ նա ապրում էր Թ. դարում այն ժամանակ, երբ Հայոց կաթուղիկոս էր Տ. Գէորգ Բ. Գառնեցին (875—896 թ.): իսկ Մխիթար Այրիվանեցին նորա անունն յիշելիս ասում է «Համամ» որ և Յոհաննէս Բագրատունի:» այս թեթև յիշատակութիւնից երևում է, որ Համամ Արևելցին Բագրատունեաց տոհմից էր: Պատմիչները որոշ չեն ասում թէ նա վարդապետ է եղել: Այդպէս մոածելու տեղիք են տուել թերես նախ այն, որ Ասողիկի պատմութեան

1. Ստեփան Ասող. թ. 2. Վարդան 81. Մխիթար Այրիվ. 55:

ընթացքից է երկում թէ խօսքը վարդապետների վերայ է, և երկրորդ այն, որ նորա անունով յայտնի գրուածքները մեծ մասով կրօնական բնաւորութիւն ունին. Մեզ յայտնի միակ ձեռագրի ճակատն, ընդհակառակն, այսպէս է. «Մեկնութիւն առակաց Սոլոմոնի, զոր արարեալ է Համամայ ուրուն է ժամանույ»: 2 Միփթար Այրիվանեցու տուած տեղեկութիւնից օգտուելով, կարելի է կարծել, որ Համամի երկրորդ անունն՝ Յոհաննէս՝ յառաջ է եկել այն ժամանակ, երբ նա եկեղեցական է դառել, սակայն պարզ է, որ առաջինն աշխարհականի անուն է: Թողնենք այն, որ Հայոց պատմութեան մէջ հին ժամանակ Արտաշէս Բ. թագաւորի օրով եղել է մի Արծրունի իշխան Համամզ անունով. մենք գիտենք, որ գեռ Ը. գարում կար մի Ամատունի իշխան Համամ 4 անունով, որ Եսայի Աղապատրուշցի կաթուղիկոսի ժամանակ 785 թուին 12 հազար մարդով փախաւ Արաբացւոց իշխանութեան երկրից դէպի Յունաց բաժինն այն պատճառով, որ արաբական ոստիկանը հայ ժողովրդին հարկերով շատ ներ-

2. Հստ Մայր Յուցակի Մատն. Ս. Էջմ. Յ Կարինեանցի համար 1117 (իսկապէս համար 1158) ծեռագիր Մատն. Մայր Աթոռոյ):

3. Թողմ. Արծր. Ա. 8:

4. Ղետոնդ, Խթ. Ասող. Բ. 4:

զումէր և իւրաքանչիւրի պարանոցը մի մի կապարեայ կնիք էր գրել իրեւ նշան ստրկութեան. Նոյն իսկ Թ. դարում երբ ըստ պատմիչների, ապրում էր Համամ Արևելցին, և Աղուանից աշխարհում որ հին ժամանակ Արևելից աշխարհ 6 էլ էր ասուում, ապրում և գործում էր «մեծ իշխանն Արևելից»: Համամն որ մի այլ յիշատակարանի ասելով մինչեւ անգամ Աղուանից թագաւոր եղաւ. 8 այս Համամ իշխանն էր, որ միացաւ Հայոց նախարարների և եկեղեցականների հետ և նոցա հանգաւակած ոսկու և արծաթի վերայ իրենն էլ աւելացնելով, Ափշին ոստիկանին փրկանք վճարեց 894 թուին և գերութիւնից ազատեց Տ. Գէորգ Բ. Գառնեցի կաթուղիկոսին: Մինչեւ անգամ Ճորսիի հովտում մի հին քաղաք ևս կայ, որ յիշուում է գեռ Ե. գարում. այդ քաղաքն է Համամաչէն կամ Համչէն գարձեալ մի Համամ իշխանի անունով. 9 թէւ ևն շուրջ վիճակի մէջ, այդ քաղաքն այ-

5. Ասողիկի մի այլ ծեռագրի մէջ է «Համամ Արեւելից» Գ. 2:

6. Մովսէս Կաղանկ. Բ. 55:

7. Յովհ Կաթ. 64:

8. (Մովսէս Կաղանկ.) Գ. 22. Ասող. Գ. 5. Ստ. Օբակ. ԺԱ. Եւ ԺԻ.:

9. Յովհ. Մամիկ. 57. Խնծիծ. Ստոր. Հայ. 521.

Ժըմ էլ գոյութիւն ունի իրեւ մի աւան, ուր բնակում են սորանից մի դար ու կէս յառաջ բռնի մահմետական դարձած հայեր, որոնք դեռ պատուսւմ են իրենց հին սրբութիւններն, ի թիւս այլոց, և այն վանքն, ուր ըստ աւանդութեան պահուած են Ա. Վարդանանց նշանաբարները. Այսպէս ուրեմն Համամ աշխարհական անուն է եղել հին ժամանակ և յաճախ է պատահում մեր պատմութեան մէջ, մինչդեռ եկեղեցականների վերայ այդպիսի անուն չենք տեսնում:

Ինչպէս որ մութն է մեզ համար Համամ Արևելցու կենսագրութիւնը, նմանապէս անծանօթ են մեզ և նորա գրուածքները, Եթէ չենք սխալուում առաջին անգամ նորա գրուածքների մասին Միշատակութիւն է անում ԺԱ. դարու պատմիչն Ստեփանոս Ասողիկ. Նա ասում է. «Եւ Համամ Արևելցի, որ զվերլուծութիւն Առակացն գրեաց, և Յովբայ զՊէդայն թարգմանեաց, և զօրհնութիւնսըն, որ ի գլուխս Սաղմոսացն ասացեալ, գիրս մի, և զԱմբիծն գիրս մի, և վերլուծութիւն քերականին:» Նոյնը գրէթէ բառացի կրկնում է ԺԳ. դարու պատմիչ մեծն Վարդան այն տարբերութեամբ, որ ասում է թէ Համամ «գրեաց մեկնութիւն Առակացն և քերականին:» Նոյն դարում Միսիթար Այրիվանեցին իւր ժամանակագրութեան մէջ ասում

է թէ «մեկնեաց զԱռակսն և եդ զվերջի գուբդայսն ի գլուխ Սաղմոսացն»: Մ. Զամշեանն, +0 յիշելով այն մատենագիրների անունները, որոնք իրեն ծանօթ են եղել, թէև նոցա գործերն իրեն ձեռքի տակ չէ ունեցել, Սեբէսի, Մովսէս Կաղանկատուացու, Ղեռնդի, Ուխտանէսի և ուրիշների կարգում դնում է և Համամի անունն իրեւ վարդապետի և, թուելով նորա գրուածքները, աւելացնում է թէ «արար և զպատմութիւն ինչ ի վերայ ազգիս Հայոց, զոր զանց առնէ յիշել Ասողիկ». սոյն տողերի լուսանցքում իրեւ ազբիւր նշանակում է նա «Ասողիկ, Ճառընտիր, Յիշատակարան», Հին պատմիչների և Մ. Զամշեանի տեղեկութիւնները գրեթէ նոյնութեամբ կրկնում են և նորագոյն հայ և օտար հեղինակները: +1 Փոքր ինչ տարբեր է Հայկաղեան բառարանի Նախագրունքի մէջ բերած տեղեկութիւնը, որից երևում է թէ Համամի անունով յայտնի են միայն Առակաց և Ովեդայի մեկնութիւնները, Յովհան Երգնկացու «քերականական խրթին բանք այլաբանութեամբ» և «հատուած շարականի ի ձեռագիրս ինչ»: Այս ամէնից

10. Զահէ. Պատմ. Ա. 18. Բ, 689:

11. S. Somal, Quadro d. st. Lit. d. Armeni, 53 և
116. c. Neumann, Vers. e. gesch. d. arm. Literatur, 117.
Զարբանալեան չ. Գ. Հայկ. հին Դպր. պատմ. 738:

Հետեւմ է, որ Համամ Արևելցու գրուածքներն ամբողջապէս և բնագրով ամէնին ծանօթ չեն եղել, որովհետեւ տակաւին ոչ ոք նոցա մասին ճիշդ գաղափար չէ տալիս: Բացառութիւն են միայն Հայկացեան բառարանի խմբագրողները, որոնք Առակաց և Ովէդայի մեկնութեանն անմիջապէս ծանօթ են երեւմ և օրինակներ են բերում: Առակաց մեկնութեան ոճը «յստակ և ընտիր» անուանելով: Այսպէս ուրեմն Համամ Արևելցու գրուածքներն են.

Ա. Սողոմոնի առակաց մեկնութիւն.

Բ. Մեկնութիւն Յորայ գրքի Լ. գլուխ, որի առաջին խօսքերն են «Ով է դա, որ Թագուցանէ զխուրհուրդ».

Գ. Սաղմոսների վերջին օրհնութիւնների մեկնութիւնը.

Դ. Մեկնութիւն ՃՓ. Սաղմոսի, որ սկսուում է «Երանեալ են ամրիծք ի ճանապարհի» խօսքերով.

Ե. Հայոց պատմութիւն.

Զ. Շարական.

Կ. Է. Քերականի վերլուծութիւն:

Թէ ի՞նչպէս այս բազմազան գործերի հեղինակը, որ Բագրատունեաց տոհմից է և ճանաչուել

է իրրե ի մաստուն ոմն, կարող էր անյայտ մը-նալ պատմութեան մէջ, այդ մեզ անհասկանալի կը լինի, եթէ մենք առանց քննադատութեան լոկ հաւատ ընծայենք հին և նոր յիշատակարանների վը-կայութեանը: Մեզ այնպէս է թուում թէ Համամ Արևելցու ովկ լինելը կը պարզուի ոչ այն հատուկտոր ցուցումներով, որ յիշուեցան վերեւում, այլ նորա գրուածքներով: Առ այժմ մեր ձեռքի տակ կայ նուրա գործերից երկուսը, այն է մի շարական և Առակաց մեկնութիւնը (թերի): Առաջինն ամբողջապէս դնում ենք այստեղ, իսկ երկրորդից քաղում ենք միայն մի քանի հատուածներ: Շարականի տների գլխատառերն յօդում են հեղինակի անունն՝ Համամ: Նոյնութեամբ արտազրուած է դա Մայր Աթոռիս գրչեայ շարականների № 1572 Ա. օրինակից, որ թէև շատ հին չէ, բայց, ինչպէս յիշատակարանից երեւում է, օրինակուած է 1328 թուին գրուած մի այլ շարականից, և շատ ընտիր գրչութիւն է: Ուրիշ շարականների մէջ էլ նցյնը կայ: բայց մենք աւելորդ ենք համարում յականէ յանուանէ յիշել, միանման խմբագրութիւն տեսնելով նոցա մէջ: Ահա Համամի շարականի բնագիրը:

«ՃԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՅՈՒԹ».

«Հայր երկնաւոր, անկանիմ առաջի անոխակալ քո գըթութեանդ. զի մեղաւք իմովք բարկացուցի և զչար առաջի քո արարի, աղաչեմ ըզքեղ ը ներեա յանցանաց իմոց, որ ը միայնդ ես ողորմած:

Որք անաւրէնըք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու, գրնացի զճանապարհս ձախակողմեանն. կատարեցի ըզչար խորհուրդնոցա. աղաչե:

ՄԵԾ են յանցանք իմ Տէ՛ր, զոր գործեցի յահէ մահու, հրամանաւ իսմայէլեան բըռնաւորին երագեցի հեղուկ զարիւն եղբաւրն. աղաչեմ ըզքե:

Աստուած ապաւէն և ըյօյս գարձելոյս ի քեզ յարենէ փրկեա զիս. որպէս թողեր զայն երգողին, թող և ինձ ըզպարտըս մեղուցեալ քո ծառայիս. աղաչե:

Մեղայ, Տէ՛ր, մեղայ, Մանասէի ձայնիւ գոչեմ ընկալ զիս, Մարդասէր, ընդ երանելեացն, որոց թողան և ծածկեցան յանցանքն, աղաչեմ ըզքե:»

Աչքի առաջ ունենալով այս շարականի բովանդակութիւնը, մենք ստիպուած ենք մտածել, որ նորա հեղինակն է «մեծ իշխանն Արևելից Համամ», որի մասին վերեն յիշուեցաւ: Շարականի բովանդակութիւնն այս է. Համամ երկնաւոր Հօր գթութեանն է գիմում և ներումն ինդրում խոստովանելով իւր յանցանքը.

«Երք անօրէնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու.»

«Գնացի զճանապարհս ձախակողմեանն.»

«Կատարեցի զչար խորհուրդ նոցա.»

«ՄԵԾ են յանցանք իմ Տէ՛ր, զոր գործեցի յահէ մահու.»

«Հրամանաւ իսմայէլեան բռնաւորին երագեցի հեղուկ զարիւն եղբօրն:»

Համամի այս խոստովանութիւնից երևում է, որ նա իւր եղբօր արիւնը թափել է արարական բռնաւորի հրամանով և իւր իսկ մահից երկիւղ կրելով: Այդ խոստովանութիւնն անելուց յետոյ Համամ իւր յօյսը գնում է Աստուծոյ գթութեան վերայ, միտք բերելով Դաւիթ և Մանասէ թագաւորներին, որոնք, թէկ մեղանչեցին Աստուծոյ առաջ, բայց զղջմամբ թողութիւն գտան. «Ընկալ

զիս, մարդասէ՞ր, աղաղակում է Համամի, ընդ երանելեացն, որոց թողան և ծածկեցան յանցանքն։»

Համամ իշխանի գործերի մասին ժամանակակից պատմիչներից մէկն՝ Յովհաննէս կաթուղիկոսն՝ հաղորդել է այն, ինչ որ նա կատարել էր Տ. Գէորգ Բ. Գառնեցի կաթուղիկոսի ազատութեան համար. այդ գործին մասնակից էր և ինքն Յովհաննէս կաթուղիկոսը, սակայն Համամ իշխանի այդ բարեգործութիւնն յիշելով, նա գիտութեամբ թէ մոռացութեամբ չի խօսում Համամի գործած ոճիւրի մասին։ Այդ եղեռնագործութիւնը մեղ յայտնի է լինում մի այլ յիշատակարանից, այն է Մովսէս Կաղանկատուացու պատմութեան շարունակութիւնից, որ գրել է Ժ. դարում Մովսէս Դասխուրանեցին 12։ Պատմելով այն, ինչ որ պատմել է և Յովհաննէս կաթուղիկոսը, Դասխուրանեցին նկարագրում է Համամ իշխանի գործերն հետեւալ կերպով. «Ապա, ասում է, բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զհայոց թագաւորութիւն. այսք ի միում ժամանակի գործեցան։ Եւ նոյն ինքն Համամ սակ սառ Ստուած մեծապէս յանցանացն,

42. 8նս Զարբնան. Հայկ. հին Դավթ. պատմ. 474:

որ վասն սնոտի այս կենցաղոյ գպար և զբանական եղբօրն ժողովեաց յանձն իւր մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և շքաւորս առատազուարթ անսպառ կատարէր, որ և զմեծ հայրապէտն Հայոց Գէորգ յանօրէն տաճկաց կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել և յոգնամեծար զնա արարեալ առողջ առ Հայաստանեայս առաքէր 15։ Ստեփ. Օրպէլեանի 14 պատմութիւնից իմանում ենք, որ Տ. Գէորգ Բ. կաթուղիկոսի գերութեան ժամանակ Աղուանից կաթուղիկոսը վախճանում է և Տ. Գէորգի գրան եպիսկոպոսը Յովնան, որ փախել էր նորա մօտից և եկել էր Աղուանք, ձեռնազրուում է այնտեղի կաթուղիկոս առանց հաւանութեան Տ. Գէորգի, այնպէս որ երր վերջինս գերութիւնից ազատուումէ, և տեսնում է Յովնանին կաթուղիկոսացած, «Հրամայէ կողոպտել ի բաց զգգեստ և զձեւ կաթուղիկոսութեանն. վասն որոյ առաջի անկեալ Համամսյ, հայցէր զներումն։ Եւ լուեալ նմա վասն մեծի երախտեացն, կրկն ձեռնազրէ զՅովնան արքեպիսկոպոս (իմա կաթուղիկոս) Աղուանից։» Առ. Օրպէլեանի այս խօսքերից երեսում է, որ Համամի բարեգործու-

43. Մով. Խաղանկ. Գ. 22.

44. Ստեփ. Օրպէլ. ԺԱ. Եւ ԺԴ.:

Թիւններից մէկն էլ այն է, որ Տ. Գէորգ Բ. կաթուղիկոսին հաշտեցնում է Աղուանից Յովնան կաթուղիկոսի հետ և իւր միջնորդութեամբ վաւերացնել է տալիս նորա իշխանութիւնը՝ շնորհիւ այն երախտիքի, որ ունէր Տ. Գէորգ Բ. հայրապետի վերայ:

Թէ ո՞վ և ի՞նչ հանգամանքների մէջ ստիպեց Համամին սպանել իւր եղբօրը, ի՞նչ քաղաքական նշանակութիւն ունէր նորա եղբայրն և ի՞նչ էր նորա անունը, պատմական յիշատակարաններից կարելի չեղաւ մի բան իմանալ: Ակներև է սակայն, որ Համամայ անունով մնացած շարականի բովանդակութիւնն համաձայն է Դասիուրանեցու վկայութեանն և հակառակ չէ միւս պատմիչների ցուցումներին, ուստի և կարելի է ասել, որ յիշեալ շարականի հեղինակը նոյն ինքն Արևելից մեծ իշխանն է Համամ Արևելցին: Կարող ենք մտածել, որ այնպիսի ծանր ոճիր գործող մի իշխան, որ իւր բարի գործերով կամեցել է իսպառ քաւել իւր յանցանքը, ի վերջո, թողած լինի թագն ու գայիսոնը և կրօնաւորի սքեմ ընդունած՝ Յոհաննէս անունով: Թէ Երբ և ի՞նչպէս տեղի ունեցաւ այդ, մեզ գժուար է որոշել սակայն որ այդ տեղի է ունեցել, կարող ենք նկատել այն գրուածքներից, որոնք Համամի անունով մնացել են և որոնք մի առ մի կարծես նոյն զղման, նոյն ծանր ապաշխարութեան գաղափարն

են ամփոփում իրենց մէջ: Սողոմոնի Առակները, ՃՃԱ. Սաղմոսը և Սաղմոսների վերջին օրհնութիւնները մեծ մասով յիշեցնում են մարդուս մեղանաշկանութիւնն և զղման բարի հետևանքները: Յորպայ գրքի ԼՅ. գլուխը, որ մի սքանչելի ներբող է Աստուծոյ մեծութեան վերայ, մարդուս անհուն տկարութեան գիտակցութիւնն է յառաջ բերում և ստիպում է Յորպայ բերանով խոստովանել թէ «Ես ոչինչ եմ, զի՞նչ տաց առ այդ պատմախանի, բայց եթէ ափի ի բերան լինիցիմ: Մի անգամ խօսեցայ և յերկրորդումն ոչ յաւելից 15:»

Սողոմոնի Առակաց մեկնութեան մի օրինակ կայ Մայր Աթոռի մատենագարանում: Համամի անունով այլ օրինակ տեսած չենք այստեղ: Յիշուում է, որ 1826 թուին Կ. Պոլսում Համամի մեկնութեան մի ձեռագիր յայտնուել է 16, բայց մենք մանրամասն տեղեկութիւն չունինք այդ օրինակի մասին: Մայր Աթոռիս գրչեայ օրինակն է № 1138 գիրքը. այնտեղ Համամի մեկնութեան լիակատար վերնագիրն այսպէս է: «Մեկնութիւն Առակաց Սողոմոնի, զոր արարեալ է Համամայ ուրումն իմաստնոյ: Ըստ շնորհաց եղեւ մեզ հանդիպել պարգևի իմաստութեան, զոր ընկալաք յարգանդի աւաղա-

15. Յոր, ԼՅ. 55, 56:—8ես նաեւ Գիրք Յորպայ տաղաշափեալ, ծանօթութեամբ, 1865. Վենիտիկ:

Նին, յոր միաւորեալ ընդ Տեառն մերումն առնումք համարձակութիւնն առաջիկայ գրոյս։» Թէև այս խօսքերը կարմիր թանաքով միանման ամբողջապէս գրուած են իբրև վերնադիր, սակայն մեզ այնպէս է թուումն որ Համամի խօսքերը չեն առաջին տողերը, այլ նորա գրած վերտառութեան խօսքերն են «ըստ շնորհաց եղև ևայլն։»

Տուն առ տուն և շատ համառօտ բացատրում է Համամ Առակների իմաստը, որ թէև այնքան էլ ճոխ և հասկանալի ոճ չունի, սակայն մեկնութեան ներքին բովանդակութեան մէջ մի ընդհանուր բան կայ, այն է շարունակ զգացնել թէ իմաստութիւն է միշտ Աստուծոյ երկիւղն աչքի առաջ ունենալ և խորշել հանապաղ չար ճանապարհից։ Ահա թէ ինչպէս է բացատրում նա Սողոմոնի խօսքերը։

«Որդեակ, մի խարեսցեն զքեզ արք ամբարիշտք, և մի ախորժեսցես երթալ ընդ նոսաւ Աստ զգուշացուցանէ զլսողս օրինացն Աստուծոյ զմիամիտս։ Եւ զհրէական զշար խորհուրդն կանխաւ գուշակէ, որ յաղագս տէրունական մահուան իլրք։ Որդեակ ասելով և շուրջ անցանելով և յուշ առնել զգիպողական իրսն ամբարշտացն, մի խաբիր ի պատրանս մոլորելոցն ի ճշմարտութենէ, մի կամիցիս ախորժել առ այնպիսիսն, որոց լիբ են միտք նոցա և խորհուրդքն չարեօք։»

«Եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն, Ե՛կ ընդ մեզ, կցորդ լե՛ր արեան, Որ ՞յ արե ան, ոչ վայրապար արդարոյ արեան, յոր սովորքն էին ի բնէ, այլ այնը արե ան, որոյ ծած կել չիք հն ար որ պէս Արէլին։»

«Զիմակ քո արկ ընդ մեզ, քսակ հասարակաց ստացնեք ամենեքեան, Որով խարեալք մատնեցան բազումք մահու և կորստեան և աւանդապահ.ք խաւարի կոչեցան. այդպիսի դառն մեծութեան ըղձացաւ յաշակերտսն թշուառականն Յուդա։»

«Զաստուածային ունելով զիմաստս, Սողոմոն որպէս հայր գթած բարբառի. Որդեակ, ասէ, մի երթայր Ճանապարհ ընդ նոսաւ Զի թէպէտ Սողոմոն էր, որ զայս ասէր, այլ Հոգին Սուրբ էր, որ նովաւ խօսէր, Խոտորեած ի շաւղաց նոցաւ Զի ոչ գոյզն պարտուց վնասակարք և փոքր չարեաց պատճառք, Երագեն ոտք նոցաւ հեղուլ զարիւն, Զ ՞ ը արիւն, զայն, որ առաւել խօսի քան ըզշաբելին. և զինչ խօսի, եթէ ոչ զանդարտար տութիւն և զթողութիւն մեղաց դարձելոցն ի նաւ։»

Ի՞նչ աւելի պարզ հայելի կարող էր լինել՝ Համամի հոգեկան վիճակը պատկերացնող քան այս

պիսի մեկնութիւնը, որի ամէն մի խօսքի մէջ ամբարըշտութեան, անիրաւութեան, անմեղ արեան և աշխարհային անհաստատ խարուսիկ հրապոյրների թշուառ վախճանն է երեւում։ Սողոմնի Առախների բազմաբեղուն իմաստները Համամին աւելի և աւելի ոգեսրում են, նորա լեզուին կենդանութիւն են տալիս քարոզելու և ուսուցանելու արդարութեան և առաքինութեան ձանապարհները։

«Ե՛րթ, ով վատ, առ մրջիւնն, ասում է Սողոմն։ Ո՛չ ի վերինս և ոչ ի վայրս գեղեցկութեան, բացատրում է Համամ։ առ տեսակս ըղձալեացն, այլ Երթ առ մրջիւնն, որ նուազն է և ի վայր քան զամենայն։ Կախանձօլ լե՛ր նորա ձանապարհացն։ Երթ, ասէ, զօրաւորդ, առ անզօրն և տե՛ս զիմաստութիւնն գործասիրութեան նորա և ուսի՞ր զիմաստութիւն նորա։ Թէ ոչ եղև բաւական բարբառն աստուածեղէն, զնա առջի՞ր օրինակ հոգեոր և մարմնաւոր գործոց։»

«Ե՛րթ առ մեղուն և ուսի՞ր զիարդ գործունեայ է։ Եւ առաւել ի գործս բժշկութեան օգտակար և ցանկալի ամենեցուն։ ինքն նուազ է ի տարրին և փառաւորեալ ի վաստակս։ բաց օրինակաւ առ Ճշմարտութեան ածցուք զբանս։ պանչելի մեղուս աստուածային օրինացն փափագողք և բերօղ աստուածային ծաղկացն աստուածախօս մարդարէք և ա-

ռաքեալք։ արդ առ այնպիսիսն յղէ զմեղ իմաստունս, ասելով։ Ե՛րթ առ մեղուս գործասէրսն, որք բժշկեցին զհիւանդութիւն բնութեանս քաղցրախօս քարոզութեամբն։»

«Մինչև յե՞րբ անկեալ կաս, ով վատ, եկն ինքըն որ բժշկէ զհիւանդացեալս և յարուցանէ զանկեալս։ Ե՞րբ ի քնյ զարթիցես ի գառն ախտս անկեալք։ քանզի անկեալս և ի քուն զայն կոչէ, որ անկեալքն են յԱստուծոյ։ վասն որոյ ասէ. Արի՛, որ ննջեսդ և կանդնեաց։ և լուսատու լիցի քեզ Քրիստոս. մի կարի փոքր մի նուաստելով փոքր մի նիրհելով յանցանելի վարս մարմնականս, և թագուցանես զձեռն ի ծոց քո այսինքն զծածուկ գործս չարին անզեղջ սիրտ ունելով որով խոտորիցիս ի բարւոյն, և հասանէ քեզ օր վախճանին իրրե զդառն ուղևոր աղքատութեան, զոր օրինակ աղքատացն մերկութեանն է անգործութիւնն, սղնպէս և անգործն ի բարեացն աղքատանայ զվերջին աղքատութիւնն, և մերկ ի մեծ ի ձմերանին լինի, ուր փախուստ ոչ գոյ և եկեսցէ քեզ իբրև զաղբիւր ամառն և կարօտութիւն իրրե զշար ինքնահալած փախիցէ. գարձեալ գովէ և յարդէ զհաւանեալս պատուիրանին իւրայ. ապա թէ անզանդաղ և ժրացեալ լինիցին շնորհօքն Աստուծոյ իրրե աղբիւր առատութեամբ հեղցի զքէ. և առաջին վտանգքն



բարձցին ի քէն և յառաջագայիլ ի չարութիւն ոչ
կարասցէ, զի զխաւարն բարձցէ և զլոյսն սփռեսցէ: »

Համամի այս բացատրութիւններից երեսում է,
որ նա մեղքի արհաւելքների հանդեպ դնում է
զղման և ապաշխարութեան յառաջացուցած քաղ-
ցըր սփոփանքը: Նա ինքն իւր գործած ծանր ոճի-
րից սարսափելով իւր խղճի խայթոցներով միշտ
իւր եղբօր անմեղ արիւնն աչքի առաջ տեսնելով,
արդարե շատ և շատ կարօտ էր այդպիսի սփոփան-
քի: Կեանքի քաղցրութիւններն, արքայական փառ-
քի մեծ շուքը, աշխարհային հրապոյնների առօրեայ
ժխորը նորա աչքին շատ և շատ աւելի պակաս էին
երեսում: Նա կարօտ էր հոգեկան հանգստութեան
նոյն իսկ մենաւոր կեանքի և աղքատութեան պար-
գևած բարիքների մէջ: Եւ այդ է պատճառը, որ
նա աւելի ընդարձակ է մեկնում Սողոմոնի Առա-
կաց այն հատուածները, որոնց մէջ համեմատու-
թիւններ են լինում մեղաւոր և արդար կեանքի
պայմանների մէջ: Ահա օրինակները.

«Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղածու-
թեամբ քան զգանձս մեծամեծս աներկիւղութեամբ:
Զի երկիւղածք Աստուծոյ խորհին օրինօք և գնան
պատուիրանօք Աստուծոյ, շաւղօք լուսոյ, և գան-
ձեն գանձս յերկինս: Այլ սիրտ առն, որ մաքրեաց
զինքն անտի, խորհեսցի զիրաւունս և զարդարու-

թիւնն Աստուծոյ, զի ուղիղ են գնացք նորա, զի
մնքն է տէր փրկելոյն ի լոյս սրբազանիցն առաջ-
նորդ, տանելով ի վերին կայանսն յանձեռագործ
խորանան: »

«Լաւ են խոնարհք և հանդարտք սրտիւ, որ
գնան հրամանաւն Աստուծոյ ի լոյս քան զայն որ
բաժանէ զաւարն արտաքին ընդ թշնամանօղան. իսկ
չնորհք Տեառն աւանդին սրբոց, աւարք հոգւոյն,
գիւտք արդարոց, զոր ասէ բան իմաստունս և ըզ-
խորհրդականս անմիտս կոչեն. և որ քաղցր են բա-
նիք աւելի ևս լուկիցեն, այնք են, որ զանձինս առ
իմաստունս ունեին, և յիմարք գտան, և զիմաս-
տունս անմիտս կոչեին, որք են սուրբ մարդարէքն
և առաքեալքն, որ ոչ զմիտս մարդկան ունեին, այլ
զՔրիստոսին, և հեղ բանիք և քաղցր ձայնիւ զես
վեհագոյն լուսն, այլ ունելով ի խորոջն զԲանն
Աստուծոյ որպէս զարդիւր կենաց կոչեցան, այսքան
մեծապէս ընկալան զջնորհս և հնչէին զիրաւագի-
տութիւն աւետարանին կենաց: »

«Լաւ են կոչունք բանջարեղէն՝ սիրով քան
զտունս: որ լի են մսով զուարակաց, թշուառու-
թեամբ: Այլ լաւ և նազելի սրբոցն վայելք մարմ-
նոյ պարկեշտագունիցն բանջարք ի վայր խաղաղու-
թեամբ և սիրով հոգւոյն առաւել քան որոց տունք
աղմկեալ և լիութիւն մնոց զբօսանօք. անտի են

բարք բարկացողք և տգեղք, որք նիւթեն զկոխւս
և զհեռս մոլորութեան վասն բնական յիմարու-
թեան, որ կրի ի նոսա. բայց որ ի մէջ բանջա-
րեղինացն կոչեցեալ, պարարեալ նոքա յաւէտ ի-
մաստիւք և երկայնմտութեան բանին Աստուծոյ,
շիջուցանեն զդատաստանս չարեաց և զգրգութիւն
ամբարշտացն ցածուցանեն, և ինքեանք բացակային ի
մեղացն գնացից և յայրեցանօդ շաւղացն. Ճանա-
պարհք կցեալ են փշօք, իսկ որք ժիրք են ի վաս-
տակս բարիս և հերկեցին զանդս մոտացն և հեղ-
ձուցանօղ զիուշ մեղացն քակեցին փութով, որ ի
տան վատին ծաղկեն և պտղաբերեն զմահու վիճակ.»

«Լաւ է առն բնակել ի տան միոջ անկեան. Տուն
զաշխարհս իմանալ, և բնակել ի յանկեան սորա ի
սուրբ եկեղեցւոջ, որ է բնակութիւն Քրիստոսի:
Իսկ որ ասէ՝ քան կնոջ անզգամի, անզգամ կին ըզ-
հերձուածօլս և զայլանդակս նշանակէ, յորմէ պարտ
է փախչիլ և անկանել յանկիւնս ճշմարտութեան.
Եղեալ այսպիսի անզգամ Մանի անիծեալ, որ իշ-
խեաց ասել թէ ինքն է հոգին, որ տացէ ջուր ծա-
րաւեաց անձանց: Նոյնպէս աւետիք բարեաց եկեալ
ի հեռաստանէ: Զուր անուանեաց զճշմարտութիւն
բանաւոր և ինքն Տէրն աղբիւր ջրոյ կենդանւոյ,
զոր Դաւիթ ասէ. ի քէն է, Տէր, աղբիւր կենաց.
իսկ անձն ծարաւի (ձեռ. ծաւարի) զհաւատացելոց

կոչեաց, որ է անձառ պարգեք Քրիստոսի. իսկ ա-
ւետիք բարեաց ի հեռաստանէ եկեալ այս է լուր և
աւետիք բարի ծնունդն Քրիստոսի, որ եկն աւետիք
հրեշտակաց ի հեռաստանէ բարձանց. թէ ոք զակն
աղբեր խնուցու և զելս ջրոյն ապականիցէ, նոյնպէս
անվայելուչ է արդարոյն անկանիլ առաջի ամբարշ-
տի: Անլաւք և թուլամիտք, որ ոչ ծանեան զճըշ-
մարիտ բարին և զծագումն արդարութեանն արե-
գական, նոյնպէս խցին զակն աղբերն անձանց իւր-
եանց: Հրէայքն աղաղակէին վասն այսր աղբեր թէ
Այրն այն ոչ է յԱստուծոյ, խցաւ նոցա և բացաւ
հեթանոսաց. այս է ակն աղբերն ի Հօրէ բղինեալ
Բանն. իսկ որ ասէ՝ և զելս ջրոց ապականէ, այս է
բան քարոզչացն, որ ընկալան զելս ջրոյն ոգւոյն
ի յինքեանս բերելով զաղբիւրն կենաց Հոգւոյն և
առատագոյն ելիւք զարժանիսն արբուցին: Եւ նոյն-
պէս անվայելուչ է արդարոյն կալ առաջի ամբարշ-
տին. և զի՞նչ բաժին կայ արդարոյն ընդ անիրաւին,
երանելին ասէ Պօղոս. և այս ամենեցուն է. բայց
գարձեալ զծեառն կեալն ասէ, որ արդար եկաց ա-
ռաջի ամբարշտ Պիղատոսի, և Հերօդի անբարբա-
ռութեամբ զիսորհուրդս անօրինացն կատարէր.»

Այսքանն իրրե ծաղկաբաղ բաւական ենք հա-
մարում Սողոմոնի Առակաց մեկնութիւնից յառաջ
բերել բանասէրների ծանօթութեան համար: Բնա-

գիրը մի հատ լինելով, բաղդատութեան կէտեր չունիք, ուստի և դժուարանում ենք սցն բնագրին լիապէս հաւատալ և հետեւ սակայն պէտք է նըշանակենք այստեղ և այն, որ Սողոմոնի Առակաց հայերէն բնագիրը Համամի մեկնութեան մէջ նման չէ մեր տպագրուած օրինակներին։ Նկատելի են բառերի տարբեր դասաւորութիւն, տարբեր իմաստով նախադասութիւններ և մինչև անգամ գլխակարգութեան տարբերութիւն։ Տեղը չէ մանրամասն յառաջ բերել այդ տարբերութիւնները։ Իբրև համառօտ օրինակներ կարող ենք յիշել հետեւալները։

Տպ. Ա. 12 իբրեւ դժոխք

Զեր. ի դժոխս.

- — 21 ի զրունս քաղաքաց
 - — “ նամարձակեալ”
 - — 22 զնոպոյ իմոյ պատգամ
 - ԺԵ. 17 “ Հաւ են կոլմոնք բանջարեղջնք սիրով եւ շնորհիւ քան զգուարակ ի մորոյ թշնամութեամբ”
 - ԽԵ. 57 “ Հաւ է բնակել առ անկեան ի տամալու քան ընդ կնոջ բամբասողի ի տան մորմ”
- ի զրունս հզորաց նամարձակեալ
 - զպատգամն հոգույ իմոյ.
 - Հաւ են կոչունք բանջառնէն սիրով քան զոտնօս որ լի են մոտվ զուարակաց թշուառութեամբ”
 - Հաւ է առն բնակել ի տան մորջ անկեան քան կնոջ անզգամի . . (թերի է երեւում):

Այսպիսի համեմատութեամբ կարելի էր վերականգնել Սողոմոնի Առակաց այն հայերէն բնագիրը, որ Թ. գարում գործածական է եղել։ Աչքի առաջ ունենալով, որ Աստուածաշնչի թարգմանութեան ժամանակ Ե. գարում նախ և յառաջ թարգմանուեցաւ Առակաց գիրքը և այդ գործը կատարողն եղաւ Ս. Մեսրոպ Մաշտոց, Հետաքրքիր կը լինի Հայոց մատենագրութեան պատմութեան համար թէ ինչ է պատճառն այն տարբերութիւնների, որ նկատելի են, և որն է ձիշուը։ Եթէ ձեռնհաս անձինք այս գործին օգուտ բերել կամենան, անշուշտ, կը գտնեն մեր գրականութեան մէջ հարուստ պաշտր, մանաւանդ եթէ ձեռքի տակ ունենան Հայոց բաղմաթիւ հին մեկնիչների գրուածքները։

Համամ Ա. բևելցու միւս գրուածքներից ոչ մեկը ձեռքի տակ չունենալով՝ առ այժմ կանգ առնենք այսքանի վերայ, եթէ յաջողի, մի այլ անգամի թողնելով խօսելու նոցա մասին։ Սակայն չենք կարող ուշադրութիւն չդարձել այստեղ Համամի երկասիրութիւններից երկուսի վերայ։ Առաջինն է Յորայ գրքի Լ. գլխի մեկնութիւնը (Ովեդա)։ պատմիչներն այդ գործի վերայ խօսելիս ասում են «զիվեդայն թարգման եւ ման եւ աց» բնաւ կարելի չէ մտածել, որ այդ նշանակեր մի այլ լեզուից հայերէն դարձնել, քանի որ Յորայ գրքի ամբողջութիւնը

բոլոր կտակարանների հետ միասին հայերէն թարգմանուել է Ե. դարում։ Եթէ այստեղ թարգմանութեան մասին խօսք է լինում՝ այդ պէտք է ըմբռնել կամ մեկնութեան իմաստով կամ բառացի։ Եթէ առաջին մտքով հասկանանք, նշանակում է Համամ Արևելցին Յորայ գրքի Լ. Գլուխը այնպէս է բացատրել, ինչպէս արել է Սոլոմոնի Առակաց գիրքը։ իսկ եթէ բառացի հասկանանք, նշանակում է Համամ Արևելցին Հին Ո. Հայրերից մէկի մ ե կութիւնը յունարէնից կամ ասորերէնից թարգմանել է հայերէն։ Համամի այդ գործի բնագիրը չունենալով կարծիք տալ կարելի չէ։ Այստեղ պէտք ենք համարում միայն նշանակել այն, որ Ս. Կիւրեղ Երուսաղեմացու Ճառերից մէկի մէջ բացատրուած է միայն Յորայ գրքի Լ. Գլուխը։ 16 Անշուշտ, այդ Ճառն հայերէն թարգմանուած է աւելի կանուխ ժամանակներում։ Անք գիտենք, որ դեռ է. գարի վերջերում Գրիգորիս վարդապետ Արշարունին Ներսէչ Կամարաշականի ինդրանօք գրեց Ընթերցուածուած մեկնութիւնը, որ իսկապէս Ս. Կիւրեղ Երուսաղեմացու Ճառերի բացատրութիւնն է։ Գրիգորիսի մեկնութեան վերջին է վերջինների համար։

16. Կողում Ընծայութեան, թ. եր. 175. Զարգան. Հայկ. Թարգմ. Նախն. եր. 326.

17. Ասողիկ թ. 2.

գիրն այպէս է. «Գրիգորի վարդապետի Արշարունեաց եպիսկոպոսի արարեալ մեկնութիւն ընթերցուածոցն Կիւրղի Երուսաղեմացւոյ գերաճաճանչ և սրբազն հայրապետի։ 18» Ս. Կիւրղի Կոչումն Ընծայութիւնն գիրքը, որ իրեն մէջ պարունակում է յիշեալ ընթերցուածները, մի հրահանգ է «յաղագս երախայից» այն է անկնունք քրիստոնեաներին Ս. Գրոշմի ընդունելութեանը պատրաստելու։ Գրիգորիս Արշարունին «Երախայից» ընդունելութեան այդ խրատներն է բացատրում պէտք է կարծել, որ Ս. Կիւրղի մեկնութիւնն այն ժամանակ հայերէն գոյսութիւն ունէր, որ նորա պարզաբանութեան կարութիւն է զգացել Ներսէչ Կամարաշականը։ Բայց «Երախաներից» զատ կային և կնքաւոր քրիստոնեաները երեկի, հին եկեղեցու մէջ լինում էին առանձին մեկնութիւններ այդ վերջինների համար։ Հին գրչեայ Ճաշոցներում աւագ հինգարթի օրուայ ժամակարգութեան մէջ Ճաշու ժամի ժամանակ Ծննդոց, Եսայեայ և Գործք Առաքելոցի ընթերցուածներից յետոյ լինում է ընդհատումն. այդ տեղ այսպիսի նկատողութիւն կայ գրուած իբրև հրահանգ. «յետ այսորիկ ի թարգմանութիւն նստին և արձակին Երախայիքն. 19» պարզ է, որ

18. Տես հին տպագր. Կ. Պոլիս 1728թ.

19. Մեր սեպտեմբեր ծեռագիր Ճաշոցից.

այստեղ թարգմանութիւն բառը հոմանիշ է մեկնութեան. և երբ պէտք էր նստել «ի թարգմանութիւն», «երախայքն» արձակուում էին. Եթէ այսպէս հասկանանք, այն ժամանակ կարելի է եղանակցնել, որ Համամ Արևելցին մեկնել է Յորայ գրքի ԼԲ. գլուխն, այլ ոչ թէ թարգմանել. նորա այդ մեկնութիւնն եղել է ոչ «երախայից», այլ կընքաւոր քրիստոնեաների կամ հասուների համար. Համամից զատ Ովէդայի մեկնութիւնն արել է և Ս. Գրիգոր Նարեկացին. Եթէ Համամ Թ. դարում այդպիսի մեկնութիւն գրել է, հարկ չկար, որ Ժ. գարում նոյն գործին ձեռնարկէր Նարեկացին. Արդէն ոճին նայելով, անհարազատ են համարում Նարեկացու այդ գրուածքը 20, որով աւելի տեղ է մնում հաւատալու, որ Ովէդայի մեկնին Համամ Արևելցին է.

Երկրորդ հետաքրքիր խնդիրն այն է թէ Համամ յօրինե՞լ է արդեօք Հայոց պատմութիւն և ի՞նչ բովանդակութեամբ. Աչքի առաջ ունենալով, որ Հայոց պատմիչներից ոչ մէկը Համամի անունը տալիս յիշում չէ նորա պատմական գրուածքի մասին, և որ մեր տեղեկութիւնն հիմնուած է միմիայն Մ. Չամչեանի մեզ ծանօթ աղբիւրի վերայ, կար-

ծել, թէ Համամ գրած լինի մի կարգաբանեալ ընդարձակ պատմութիւն, շատ գժուար է. Միենոյն ժամանակ նկատելով, որ Յովհաննէս կաթուղիկոսը լուռմէ Համամ իշխանի ուրիշ գործերի մասին և որ Մովսէս Դասիուրանեցին, թէպէտե հարեանցի, յիշում է Համամի նախապատճառ լինելն Աղուանից թագաւորական գահի վերականգնման և այլ դորա հետ կապ ունեցող իրողութիւնների, որոնց կարգումն է, անշուշտ և Համամի եղբօր սպանման գործը, պէտք է կարծել, թէ Համամ Արևելցին ինքն իւր ժամանակի և իւր իսկ գլխով անցած գէպքերի յիշատակարանն յօրինել է իւր մենաւոր կեանքի օրերում, և այդ հաւանական է երեսում այն պատճառով, որ ինչպէս տեսանք, նա չէ ծածկել իւր յանցանքը և յօրինել է մի շարական, իւր կեանքի միայն մի գէպքի խոստովանութիւնն անելով: Եւ եթէ կարող է խօսք լինել Համամի յօրինած պատմութեան մասին, միմիայն այդպիսի մի յիշատակարան կամ համառօտ տարեգիր պիտի հասկանանք, որն, եթէ յայտնուէր, անշուշտ, Հայոց նախնի պատմագրութեան համար շատ թանգագին գանձ կը լինէր.

Զենք շտապում ուրիշ եղբակացութիւնների գիմելու այս հետաքրքիր հեղինակի որպիսութիւնը

պարզելու համար: Բաւական ենք համարում առաջմ ամիսովել մեր խօսքը հետևեալ կերպով:

Հայոց պատմիչների տուած տեղեկութիւնները չեն վերաբերում Թ. դարում ապրող երկու ժամանակակից անձերի, այլ միւնոյն մի անձի, այն է Արեւելից աշխարհի մեծ իշխան Համամին, որ Բագրատունեաց տոհմից է: Բուզայ ոստիկանի արշաւանքների և հարուածների ժամանակ, յայտնի չէ ի՞նչ հանգամանքների մէջ, Համամ իշխանն, իւր մահից երկիւղ կրելով, «իսմայէլեան բռնաւորի» թելադրութեամբ սպանում է իւր եղբօրը. 885 թուին նա Աղուանից թագաւոր է լինում. Ափշին ոստիկանի յարձակումների ժամանակ նա, երեկի, լաւ յարաբերութիւն է ունեցել բռնաւորի հետ, որը Հայոց նախարարներին նուածելու նպատակով կալանաւորել էր Տ. Գէորգ Բ. Գառնեցի կաթուղիկոսին և իրեն հետ շրջեցնում էր ամէն տեղ. 894 թուին Ափշին ոստիկանը գերեալ կաթուղիկոսի հետ միասին արդէն Աղուանից Պարտաւ քաղաքումն էր, որ Հայոց Եկեղեցականներն ու նախարարները ոստիկանի պահանջին համեմատ գումարել էին ոսկու և արծաթի մեծ քանակութիւն և ուղարկել էին Աղուանից Համամ թագաւորին, որպէս զի վերջինս վճարէ փրկանք և ազատէ կաթուղիկոսին. Համամ ինքն էլ, իւր գանձերից պահանջում:

Արացնելով՝ յագեցնում է բռնաւորի ագահութիւնը և Տ. Գէորգին ազատելով, մեծ պատիւներ է տալիս, հիւրասիրում է, փառքով Ճանապարհ է գնում դէպի Դուկին. այդ ժամանակ էր, որ Տէր Գէորգ կամենում էր պատժել Աղուանից նոր կաթուղիկոսին՝ Յովնանին. Համամ բարեխօս է Հանգիսանում Յովնանի մասին և մեծ հայրապետը, Համամի երախտիքն առ ինքն յարգելով, ներում է Յովնանին. Իրրե Եղբայրասպան ոմն՝ Համամ թագաւորն աշխատում է բարի գործերով քաւել իւր ոճիրը. Եկեղեցիներին նուերներ է տալիս և չքաւորներին ողորմութիւններ է բաժանում. Ապա, ինչպէս երեւում է, Յուսուփի ոստիկանի ծանր և անգորշն հարուածների ժամանակ Համամ թագաւորն ընտրում է մենակեցութիւն և ընդունում կրօնաւորի սքեմ, փոխելով իւր անունն Յոհաննէս: Այս կոչման մէջ և նուիրում է նա իւր ժամանակը գրաւոր պարապմունքների: Նորա գրուանքներից երկուսի հետ ծանօթացանք արդէն. մէկը շարականն է և միւսը Սոլոմոնի Առակաց մեկնութիւնը: Դոցանից զատ նա գրել է Ովէդայի, ՃՓԼ. Սաղմոսի և Սաղմոսաց վերջին օրհնութիւնների մեկնութիւնները, Հայոց Պատմութիւն և քերականի վերլուծութիւն:

Հայոց նախնի մատենագրութեան մէջ, ի թիւս այլոց, Եղել են և թագակիր Տեղինակներ, ինչպէս

օրինակ վերջին Գագիկը, հեղինակներ և նախարարական ազնիւ տներից, ինչպէս է Գրիգոր Մագիստրոս և այլք ոմանք. Համամ Արևելցին այդպիսի գրագէտների կաձառի մէջ իւր երկասիրութիւններով գրաւում է ոչ պակաս նշանաւոր տեղ: Յուսանք որ բանասիրութիւնն հետզհետէ պարզէ այդ ընտիր հեղինակի բազմակողմանի նշանակութիւնն, հանդէս բերելով նորա տակաւին անծանօթգործերը:



«Ազգային գրադարան»



NL0360401

Ա. ԿԱՍՏԵՐԵՆԿՅԱՅԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց

Վ. Բէննա 1877

Գիրք առաջին բնադիր (զրարան)

Գիրք երկրորդ թարգմանութիւն (աշխարհ).

Բ. տպ.

Գիրք երրորդ ծանօթութիւններ.

Հայոց հեթանոսական կրօնը. Վաղարշապատ

1879թ.

Ստեփ. Օրգէլհանի ողբ ի Ա. Կաթուղիկէն
Էջմիածնի. Թիֆլիս 1885 թ.

Թովման Մեծոփեցու Յիշտակարանը Թիֆլիս
1892 թ.

Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը.
Թիֆլիս 1892 թ.

Նոր ժողովածու. Ա. պրակ. Թիֆլիս 1892 թ

Նոյն Բ. պրակ.

Նոյն Գ. « »

1896

Դասագրեր

Գրաբասի Խոնարհումը Թիֆլիս 1881 թ.

Գրաբասի Հոլովումը Թիֆլիս 1881 թ.

Շաղկաբաղ արձակ և չափածոյ բանից յերիս
շրջանս. Թիֆլիս 2881 թ.

Շաղկաբաղ Ա. շրջան Բ. տպագր. Թիֆլիս
1885 թ.

Շաղկաբաղ Բ. շրջան Բ. տպագր. Թիֆլիս
1894 թ.

Բառացուցակ առաջին շրջանի ծաղկ. Համար.
Թիֆլիս 1885 թ.

Կախաշաւիլ Թիֆլիս 1893 թ. Բ. տպագր.